ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՈՒՆԻՍ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Միրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:

Ուշադի՛ր կարդացեք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ գրքույկը չի ստուգվում, էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Մաղթում ենք հաջողություն

1 Ե՞րբ է ՀՀ Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակել անկախ պետություն:

1) 1993 թ. օգոստոսի 23
2) 1990 թ. սեպտեմբերի 21
3) 1991 թ. սեպտեմբերի 23
4) 1992 թ. հոկտեմբերի 16

2 Ե՞րբ են կալանավորվել Գրիգոր Զոհրապը, Վարդգեսը, Սիամանթոն և այլք:

1) 1917 թ. մայիս 25
2) 1915 թ. ապրիլի 24
3) 1916 թ. հունիսի 24
4) 1914 թ. հունիսի 25

3 Ե՞րբ է Մեծ Հայքի թագավորությունը բաժանվել Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև:

1) 387 թ.
2) 363 թ.
3) 303 թ.
4) 350 թ.

4 Ե՞րբ են անկախ հռչակվել Մեծ Հայքը, Փոքր Հայքը և Ծոփքը:

1) Ք. ա. 185 թ.
2) Ք. ա. 189 թ.
3) Ք. ա. 201 թ.
4) Ք. ա. 331 թ.

5 Ե՞րբ է տեղի ունեցել Բաշ Ապարանի հերոսամարտը:

1) 1918 թ.
2) 1919 թ.
3) 1920 թ.
4) 1921 թ.

6 Ե՞րբ է հիմնադրվել Լազարյան ճեմարանը:

1) 1810 թ.
2) 1815 թ.
3) 1824 թ.
4) 1837 թ.

7 Ե՞րբ է տեղի ունեցել Ճարմանայի ճակատամարտը:

1) 483 թ.
2) 482 թ.
3) 481 թ.
4) 484 թ.

8 Ե՞րբ է Տրդատ Ի–ը կառուցել Գառնիի ամրոցը:

1) 76 թ.
2) 86 թ.
3) 72 թ
4) 85 թ.

9 Բագրատունի ո՞ր արքայի օրոք է Անին հռչակվել մայրաքաղաք:

1) Գագիկ I
2) Աշոտ III
3) Գագիկ II
4) Աշոտ II

10 Երվանդունի ո՞ր արքան է հատել մեզ հասած առաջին հայկական արքայական դրամները:

1) Տիգրան
2) Վահագն
3) Արշամ
4) Շամ

11 Սան Ռեմոյի խորհրդաժողովին մասնակցում էին՝

1) Ավետիս Ահարոնյանը և Ալեքսանդր Խատիսյանը
2) Պողոս Նուբարը և Ավետիս Ահարոնյանը
3) Ալեքսանդր Խատիսյանը և Համո Օհանջանյանը
4) Համո Օհանջանյանը և Պողոս Նուբարը

12 Որտե՞ղ են հուղարկավորել Մեսրոպ Մաշտոցին:

1) Օշական
2) Հացեկաց
3) Սասուն
4) Էրզրում

13 **Ո՞ր ճակատամարտից հետո Բյուզանդիան մեկընդմիշտ հրաժարվեց Կիլիկիայից:**

1) Երուսաղեմի
2) Բերդուսի
3) Միրիոկեֆալոնի
4) Մառիի

14 **Ո՞վ է հաջորդել Վանի թագավորության արքա Արգիշտի I-ին:**

1) Ռուսա I
2) Սարդուրի II
3) Արգիշտի II
4) Ռուսա II

15 **Ալեքսանդր Թամանյանի նախագծով կառուցվել է՝**

1) Հրազդան մարզադաշտը
2) Սասունցի Դավթի արձանը
3) Օպերայի և բալետի թատրոնը
4) Մարզահամերգային համալիրը

16 **Երևանի նահանգում ո՞վ է գլխավորել հայերի ինքնապաշտպանությունը հայ–թաթարական ընդհարումների ժամանակ:**

1) Սնքարեցի Սաքո
2) Հակոբ Կոտոյան
3) Նիկոլ Դուման
4) Արմեն Գարո

17 **Ե՞րբ է ընդունվել պատմական այս որոշումը.**

«Ընդառաջելով ԼՂԻՄ–ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և ԼՂԻՄ–ը Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմից Հայկական ԽՍՀ–ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:

1) 1989 թ. նոյեմբերի 15
2) 1991 թ. դեկտեմբերի 2
3) 1988 թ. փետրվարի 20
4) 1990 թ. օգոստոսի 23

18 **Որտե՞ղ է հնչել Արամ Մանուկյանի հետևյալ ելույթը.**

«Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար.... Մենակ ենք և պետք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»:

1) Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նիստում
2) Արևմտահայերի ազգային համագումարում
3) Երևանի Հայոց ազգային խորհրդի նիստում
4) Հայոց ազգային համախորհրդակցությունում

19 **1920 թ. դեկտեմբերի 25–ին Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան համագումարի կողմից հռչակված Սյունիքի երկրամասը կոչվում էր՝**

1) Ինքնավար Սյունիք
2) Անկախ Սյունիք
3) Զանգեզուր
4) Լեռնահայաստան

20 **Ի՞նչ անունով էր հայտնի 1918 թ. մայիսին Դանիել Բեկ–Փիրումյանի գլխավորությամբ ստեղծված զորաջոկատը:**

1) Սարդարապատի ջոկատ
2) Հայկական լեգեոն
3) Մահապարտների գունդ
4) Երևանյան ջոկատ

21 **Անտոնիոսը Հռոմի Ծերակույտին իր պարթևական արշավանքի ձախողումը բացատրում էր՝**

1) իր ենթակաների ապաշնորհությամբ և անհեռատես գործելակերպով:
2) հայոց թագավոր Արտավազդ II–ի դավաճանությամբ:
3) եղանակային անբարենպաստ պայմաններով և զորքում բռնկված համաճարակով:
4) պարթևական բանակի թվական գերակշռությամբ:

22 **Ի՞նչ հետևանք ունեցավ Հայաստանի համար Արտաշատի հայ–հռոմեական պայմանագրի կնքումը:**

1) Հայաստանը պահպանեց պետական անկախությունը:
2) Տիգրան Մեծը կորցրեց «արքայից արքա» տիտղոսը:
3) Հյուսիսային Միջագետքը տրվեց Պարթևստանին:
4) Հայաստանը կորցրեց իր անկախությունը:

23 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. ՀՀ-ում առաջին նախագահական ընտրությունների անցկացումը:
բ. Հայոց ազգային բանակի ստեղծման սկիզբը:
գ. Սպիտակի աղետալի երկրաշարժը:
դ. Բաքվի հայության կոտորածն ու տեղահանությունը:

1) գ, բ, ա, դ
2) գ, դ, ա, բ
3) ա, գ, դ, բ
4) ա, դ, բ, գ

24 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա.Վանի ինքնապաշտպանությունը՝ Արամ Մանուկյանի ղեկավարությամբ:
բ. Սասունի հերոսամարտը՝ Մեծն Մուրադի ղեկավարությամբ:
գ. Վանի հերոսամարտը՝ Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ:
դ. Սասունի հերոսամարտը՝ Անդրանիկ Օզանյանի ղեկավարությամբ:

1) դ, բ, ա, գ
2) բ, գ, դ, ա
3) դ, ա, գ, բ
4) բ, դ, գ, ա

25 **Կատարե՛ք տարեթվերի և պատմական իրադարձությունների համապատասխանեցում:**

Տարեթիվ	Պատմական իրադարձություն
1) 1045 թ.	ա.Ռուբինյան իշխանության հիմնումը
2) 1080 թ.	բ. Անիի Բագրատունյաց թագավորության անկումը
3) 1512 թ.	գ. Հայաստանի վերաբաժանումը ախոյանների միջև
4) 1639 թ.	դ. Հայերի բռնագաղթը դեպի Պարսկաստան
	ե. Հայկական տպագրության հիմնադրումը

1) 1-բ, 2-ա, 3-ե, 4-գ
2) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
4) 1-գ, 2-դ, 3-ե, 4-ա

26 **Կատարե՛ք համապատասխանեցում:**

1. Նանե	ա. գրի և գրականության, արվեստի և գիտության հովանավոր
2. Վահագն	բ. հյուրընկալության հովանավոր
3. Աստղիկ	գ. ընտանիքի հովանավոր
4. Տիր	դ. սիրո, լույսի և գեղեցկության հովանավոր
	ե. ռազմի, քաջության և ամպրոպի հովանավոր

1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
3) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա
4) 1-բ, 2-ե, 3-ա, 4-գ

27 **Տրված փաստարկներից ո՞րն է ճիշտ:**

1) Լեռանյային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակվել էր ԼՂԻՄ և Գետաշենի շրջանի տարածքում:
2) Շուշիի գրավման «Հարսանիք լեռներում» ռազմական գործողությունը գլխավորել է Դուշման Վարդանը:
3) Անկախության հռչակագրի ընդունումից երկու ամիս անց Հայաստանում առաջին անգամ անցկացվել են նախագահական համաժողովրդական ընտրություններ:
4) ՀՀ Գերագույն խորհուրդը, հիմնվելով Անկախության հանրաքվեի արդյունքների վրա, Հայաստանը հռչակել է անկախ պետություն:

28 **Ե՞րբ է ավարտվել Հայրենական մեծ պատերազմը:**

1) 1940 թ. հունիսի 22
2) 1944 թ. սեպտեմբերի 2
3) 1943 թ. նոյեմբերի 11
4) 1945 թ. մայիսի 9

29 **Ե՞րբ է գահակալել Տիգրան Մեծը:**

1) Ք. ա. 115–95 թթ.
2) Ք. ա. 95–55 թթ.
3) Ք. ա. 55–34 թթ.
4) Ք. ա. 160–115 թթ.

30 **Ո՞ր բերդում էր ամրացել Սմբատ I Բագրատունին, երբ մոտ մեկ տարի դիմադրում էր Յուսուֆին:**

1) Երնջակ
2) Արտագերս
3) Կապույտ
4) Դարույնք

31 **Ո՞վ է գունավոր հեռուստատեսության հիմնադիրը:**

1) Անդրեաս Արծրունի
2) Հակոբ Չամչյան
3) Հովհաննես Ադամյան
4) Խորեն Սինանյան

32 **Հայոց ո՞ր սպարապետի մասին են ասվել այս խոսքերը.**
«Ճերմակաձին գինի արբցէ»:

1) Արտավազդ Մամիկոնյան
2) Վաչե Մամիկոնյան
3) Մուշեղ Մամիկոնյան
4) Մանվել Մամիկոնյան

33 **Ո՞ր ճակատամարտի մասին է Դիոն Կասիոսը ասել հետևյալ խոսքերը.**
«Հայերը, նետահարելով հռոմեացիներին, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին:
Այնժամ [հռոմեացի զորավարը], քանզի շատերը վիրավորվել էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց»:

1) Ակցիում
2) Հռանդեա
3) Արածանի
4) Խառան

34 **Իսրայել Օրու կազմած և Հովհան Վիլհելմին ներկայացրած Հայաստանի ազատագրության ծրագիրը կոչվում էր՝**

1) Պֆալցյան
2) Մոսկովյան
3) Հարավային
4) Հյուսիսային

35 **Բեռլինի վեհաժողովի որոշումներից հայերը խոր հիասթափություն ապրեցին, քանի որ՝**

1) արևմտահայությանը մերժեցին դառնալ Ազգերի լիգայի անդամ:
2) ֆրանսիական զորքերի դուրսբերումով բարեփոխումների կենսագործման որևէ երաշխիք չէր մնում:
3) Մեծ տերությունները հանդես էին գալիս հայկական բարեփոխումների պահանջներով՝ նպատակ ունենալով զիջումներ կորզել Թուրքիայից:
4) արևելահայությունը ստանում էր միայն մշակութային ինքնավարություն:

36 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Հեթումյանների հաստատումը Կիլիկիայի հայոց գահին:
բ. Արշակունիների արքայատոհմի հաստատումը հայոց գահին:
գ. Ռուբինյանների հաստատումը Կիլիկիայի հայոց գահին:
դ. Բագրատունյաց թագավորության հաստատումը հայոց գահին:

1) բ, դ, գ, ա
2) դ, բ, գ, ա
3) բ, դ, ա, գ
4) դ, գ, ա, բ

37 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Միացյալ և անկախ Հայաստանի հռչակումը:
բ. Սևրի պայմանագրի կնքումը:
գ. Բաթումի հաշտության պայմանագրի կնքումը:
դ. Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը:

1) ա, գ, բ, դ
2) դ, գ, ա, բ
3) բ, ա, դ, գ
4) գ, դ, ա, բ

38 **Կատարե՛ք համապատասխանեցում:**

1. Հովհաննես Բաղրամյան	ա.ավիացիայի մարշալ
2. Համազասպ Բաբաջանյան	բ. լեգենդար հետախույզ
3. Իվան Իսակով	գ. զրահատանկային զորքերի մարշալ
4. Արմենակ Խամփերյանց	դ. նավատորմի ծովակալ
	ե. ռազմաճակատի հրամանատար

1) 1-ե, 2-գ, 3-դ, 4-ա
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
3) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե

39 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

1) Ուշ միջնադարում ծխական դպրոցների հիման վրա ձևավորված նոր տիպի դպրոցները կոչվեցին վարդապետարաններ:
2) Եկեղեցիների պատերի վրայի մանր որմնանկարները կոչվում են խճանկարներ:
3) Շարականներ էին կոչվում միջնադարյան աշուղների երգած երգերը:
4) Առանձին եկեղեցիներից ու աշխարհիկ նշանակության շինություններից բաղկացած կառույցները կոչվում էին վանական համալիրներ:
5) Պատվանդանի վրա կանգնեցված սալաձև կոթող–խաչարձանը կոչվում է խաչքար:

40 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառները:**

1) Հայ–վրացական սահմանազատման համաձայնագրի արդյունքում Ջավախքը ստացավ ինքնավարություն Վրաստանի կազմում:
2) Հայկական Սփյուռքի առաջացման հիմնական պատճառը թուրքական պետության կողմից իրականացված ցեղասպանությունն էր:
3) Մոսկվայի պայմանագրի արդյունքում Հայաստանը ունեցավ տարածքային կորուստներ:
4) Ադրբեջանի անկախության հռչակագրի ընդունման հետևանքով Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը դարձան նրա տարածքի անբաժան մասը:
5) ԽՍՀՄ ղեկավարությունը իր ողջ գոյության ընթացքում հանդես է եկել Թուրքիայից հայկական հողերի պահանջով:

41 **Ընտրե՛ք ճիշտ պնդումները:**

1) Հռոմեական տերության նվաճողական քաղաքականության հետևանքով Մեծ Հայքում վերջ դրվեց Հայկազունիների Երվադական ճյուղի իշխանությանը:
2) Գավգամելայի ճակատամարտից հետո Մեծ Հայքը և Փոքր Հայքը հռչակվել են անկախ պետություններ:
3) Հայոց արքա Արշամը կառուցել է Կոմմագենեի Սամոսատ քաղաքը և հատել առաջին հայկական արքայական դրամները:
4) Երվանդ I Սակավակյացը զոհվել է մայրաքաղաք Երվանդաշատի պաշտպանության ժամանակ:
5) Տիգրան Երվանդյանը, հայոց արքա լինելուց բացի, եղել է Կյուրոսի տերության արևմտյան կեսի փոխարքա:

42 **Գտե՛ք այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Սարդարապատի գրավումը թուրքական զորքի կողմից:
2) Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդի անդրանիկ նիստը:
3) ԽՍՀՄ-ի կազմավորումը:
4) Հայաստանի խորհրդայնացումը:
5) Փետրվարյան ապստամբության սկիզբը:

43 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Հալիձորի հաղթական ճակատամարտը:
2) Մադրասի տպարանի հիմնումը:
3) Իսրայել Օրու ժամանումը Ռուսաստան:
4) Դավիթ բեկի ժամանումը Սյունիք:
5) «Որոգայթ փառաց» աշխատության հրատարակումը:

44 **Կատարե՛ք համապատասխանեցում:**

ա. Բուխարեստի պայմանագիր	1. 1878 թ.
բ. Բեռլինի պայմանագիր	2. 1812 թ.
գ. Գյուլիստանի պայմանագիր	3. 1828 թ.
դ. Ադրիանուպոլսի պայմանագիր	4. 1813 թ.
ե. Թուրքմենչայի պայմանագիր	5. 1829 թ.
	6. 1856 թ.

45 **Սևրի պայմանագրի ստորև տրված պնդումներից ընտրեք՝ «ճիշտ է», «սխալ է», «չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

1) Թուրքիան ճանաչում էր Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն:
2) Հայաստանի սահմանները Վրաստանի և Ադրբեջանի հետ որոշելու էին ԱՄՆ–ն և Ֆրանսիան:
3) Ճանաչվում էին հայ–ադրբեջանական գոյություն ունեցող սահմանները:
4) Հայ–թուրքական սահմանների վերաբերյալ վերջնական իրավարար վճիռը տալու էր ԱՄՆ-ի նախագահը:
5) Պատժի պետք է ենթարկվեին հայկական ջարդերի կազմակերպիչները, Թուրքիան պարտավորվում էր փոխհատուցելու հայերի կրած վնասները:
6) Թուրքիան պարտավորվում էր իրավարար վճռի հրապարակման օրվանից հրաժարվել պայմանագրով Հայաստանին տրված տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից:

Պետական ավարտական քննություն 2022-2023 թթ. *ուստարի*

Պատասխանների ձևաթուղթ

Հայոց պատմություն

Հիշեցում՝ ընտրված տարբերակի համարին համապատասխանող վանդակում դնե՛լ X նշանը (միևնույն սյունակում մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի համարը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
1	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	1
2	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	2
3	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	3
4	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	4

Պատասխանի համարը

	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	
1	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	1
2	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	2
3	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	3
4	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	4

Հիշեցում՝ պատասխանի թվերից յուրաքանչյուրը գրել մեկական վանդակում:

Կարճ պատասխանով առաջադրանքներ

39 ☐☐
40 ☐☐
41 ☐☐
42 ☐☐

43 ☐☐☐☐☐
44 Ա Բ Գ Դ Ե ☐☐☐☐☐

Պնդումների փունջ

45.	1	2	3	4	5	6
ճիշտ է	☐	☐	☐	☐	☐	☐
սխալ է	☐	☐	☐	☐	☐	☐
չգիտեմ	☐	☐	☐	☐	☐	☐

Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

1	☐	☐	
2	☐	☐	
3	☐	☐	
4	☐	☐	

☐☐ ☐☐☐☐☐☐

45. ☐
ճիշտ է ☐
սխալ է ☐
չգիտեմ ☐

☐
Փոխված պատասխանների քանակը

Արտագրե՛ք այս նախադասությունը՝

Ծանոթ եմ քննության կարգին:

.....

Հանձնաժողովի անդամներ՝

1. .....

2. .....

Հանձնաժողովի նախագահ՝

.....

Միավորների գումարը	
Գնահատականը	